« ՀՀ Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

«Հայոց Մեծ եղեռն» խմբակի ծրագիր

Կրթական աստիճան- Ավագ դպրոց՝ 3-րդ աստիճան
Դասարանը – 11-12-րդ դասարաններ
Խմբակին հատկացված ժամաքանակը – 2 ժամ

Բացատրագիր

«Հայոց մեծ եղեռն» խմբակի ծրագիրը ներկայացված է աղյուսակի տեսքով, որը կազմված է հետևյալ բաժիններից.

1. Թեմայի անվանումը, ժամաքանակը
2. Նպատակները
3. Խնդիրները
4. Վերջնարդյունքները
5. Բովանդակությունը

Ծրագրում առանձնացված են որոշակի թեմաներ, որոնք համապատասխանում են սովորողների նախասիրություններին, հետաքրքրություններին:
Ծրագրում նշված է ընդհանուր ժամաքանակը ուսումնական տարվա համար, թեմայի վերնագիրը, նպատակները, ակնկալվող վերջնարդյունքները՝ շեշտը դնելով սովորողի գիտելիքների, կարողությունների և հմտությունների զարգացման վրա:
XX դարի սկզբին հայ ժողովուրդը իր բնօրրանում ենթարկվեց ցեղասպանության, սակայն տարբեր երկրների ու կառավարությունների կողմից հաճախ անտեսվում են հայ ժողովրդի պատմական-ազգային իրավունքները: Հայկական հարցի լուծման համար պայքարը ձեռք է բերել հստակ բովանդակություն՝ ճանաչում և փոխհատուցում: Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը շարունակվում է, և սերունդների գործն է տրամաբանական ավարտին հասցնել այդ պայքարը: Հետևաբար, խմբակի պարապմունքների արդյունքում Հայոց ցեղասպանության պատմության խորը ուսումնասիրումը Հայաստանի Հանարապետության հանրակրթական դպրոցների բարձր դասարաններում մեր մատաղ սերնդի մոտ կձևավորի հարգանք մարդու և ժողովուրդների բնական իրավունքների հանդեպ, կդաստիարակի մաքուր ու անկեղծ հայրենասիրության, ցեղասպանության երևույթի անվերապահ դատապարտման և անկաշառ հայրենասիրության ոգով:
Խմբակի պարապմունքների ընթացքում սովորողները կհամոզվեն, որ ինչպես փարոսն է լուսավորում ծովագնացների՝ նավաստիների ու նավերի ճանապարհը մութ ու մռայլ գիշերներին, այնպես էլ ժամանակը կլուսավորի և կլուծի Հայկական հարցը, և երիտթուրքերի իրավահաջորդ Թուրքիան պատասխան կտա 1915թ. Հայոց եղեռնագործության համար:

Բովանդակությունը

1. Ներածություն
2. Հայոց Մեծ եղեռնի իրականացման գործում մեղավորը միա՞յն Օսմանյան կայսրությունն է:
3. Օսմանյան կայսրությունից բացի, էլ ո՞ր երկրներն են կրում պատասխանատվություն :
4. Ռուսաստանյան Դաշնությունը, լինելով Խորհրդային Ռուսաստանի և ԽՍՀՄ-ի իրավահաջորդը, կրու՞մ է բարոյական ու իրավական պատասխանատվություն:
5. ԱՄՆ-ը կրու՞մ է արդյոք բարոյական և իրավական պատասխանատվություն Հայոց Մեծ եղեռնի հետևանքների չվերացման համար :
6. Հայոց Ցեղասպանության մեջ հայ ժողովուրդն ունի՞ արդյոք պատասխանա-տվության և մեղքի իր բաժինը:
7. Ինչո՞ւ 1-ին աշխարհամարտի ավարտից հետո Հայոց Մեծ եղեռնն իրականացրած երիտթուրք պարագլուխները չպատժվեցին հաղթող տերությունների կողմից:
8. Որո՞նք են Հայկական և հրեական ցեղասպանությունների միջև եղած նմանություններն ու տարբերությունները:
9. Հնարավոր է արդյո՞ք Արևմտյան Հայաստանի վերադարձը իր տիրոջը՝ հայ ժողովրդին:
10. Թուրքական պետությունը և թուրք ժողովուրդը ընդունելո՞ւ են իրենց մեղքը Հայոց Ցեղասպանության համար, Հայ ժողովուրդը երբևէ ներելո՞ւ է ցեղասպան Թուրքիային և թուրք ժողովրդին՝ **« 1915 »** -ի համար:
11. Եզրակացություն
12. Գրականություն
13. Հավելված

Նպատակները

1. Ներկայացնել՝

ա) Ուսումնառության ընթացքում սովորողների ստացած գիտելիքները Հայոց Մեծ եղեռնի՝ որպես պատմական իրադարձության, և նրան առնչվող բոլոր ներկա ու ապագա դրսևորումների , Ադրբեջանի և Թուրքիայի հայատյաց ցեղասպան քաղաքականության, Արցախի նկատմամբ Ադրբեջանի ցեղասպան վարքագծի և համաշխարհային արձագանքների մասին:

բ) Հայոց ցեղասպանության շարժառիթները, պատճառները, ծրագրերը, փուլերը, հետևանքները, ճանաչման գործընթացը, ինքնապաշտպանական մարտերը. ցույց տալ, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը Հայաստանի Հանրապետության, ողջ հայության համար ազգային անվտանգության հիմնախնդիր են:

2. Ձևավորել և զարգացնել՝

ա) Փաստերի, տեսաֆիլմերի, սկզբնաղբյուրների, Հայոց Մեծ եղեռնի հուշահամալիր այցելության միջոցով ձևավորել և ամրապնդել սովորողների գիտելիքները Հայոց Մեծ եղեռնի կազմակերպման և իրականացման վերաբերյալ:

բ) Ձևավորել և զարգացնել ազատության, անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համար մղվող պայքարին սեփական մասնակցությունը բերելու գաղափարը:

գ) Զարգացնել սովորողների ճանաչողական, տրամաբանական, ստեղծագործական մտածողությունը, հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները:

դ) Ձևավորել պատմական դեպքերը, երևույթները համեմատելու, համադրելու, վերլուծելու, գնահատելու, ընդհանրացնելու կարողություններ:

ե) Զարգացնել ուսումնառության ընթացքում սովորողների ստացած գիտելիքները և տեսական դրույթները պատմական կենդանի նյութի վրա կոնկրետացնելու, անցյալի ու ներկայի հասարակական-քաղաքական երևույթների վերլուծության ժամանակ կիրառելու կարողություններ և հմտություններ:

3. Նպաստել՝

ա) Սովորողների գիտելիքների ձեռքբերմանը 1915-1917թթ. Հայոց Մեծ եղեռնի օրգանական շարունակությունը դարձած Օսմանյան կայսրության կողմից Արևմտյան Հայաստանի , Արևելյան Հայաստանի և Արցախի հայերի վերաբերյալ ցեղասպան քաղաքականության մասին:

բ) Յուրացնելու 1-ին և 2-րդ աշխարհամարտերի գլխավոր դերակատարներից մեկի՝ թիվ մեկ գերտերության՝ ԱՄՆ-ի և՛ ուղղակի, և՛ անուղղակի առնչությունը Հայկական հարցի և Հայոց Ցեղասպանության մասին :

գ) Նպաստել գիտելիքների ձեռքբերմանը՝ վերլուծելու, մեկնաբանելու Հայ

ժողովրդի և մասնավորապես արևմտահայության թույլ տված հիմնական սխալները, որոնց հետևանքով Օսմանյան կայսրությանը հաջողվեց իրականացնել Հայոց Մեծ եղեռնը:

դ) Մարդկության պատմության ընթացքում իրականացված ցեղասպանությունների ընդհանրություններն ու առանձնահատկությունները ուսումնասիրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու, համադրելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու կարողությունների զարգացմանը:

ե) Սովորողների կողմից գիտելիքների ձեռքբերմանը եղեռնազարկ եղած և հայրենազրկված հայ ժողովրդին հասցված վնասների փոխհատուցման, Արևմտյան Հայաստանում պահպանված հայ մշակութային ժառանգության ոչնչացման, քրդական հարցի վերաբերյալ վերաբերմունք արտահայտելու, գնահատելու կարողությունների զարգացմանը:

զ) Նպաստել սովորողների կողմից հայ ժողովրդի հանդեպ նոր ցեղասպանություն իրականացնելու Թուրքիայի Հանրապետության քաղաքականության վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը, տվյալ ժամանակաշրջանի կարևոր փաստերը բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու, գնահատելու կարողությունների զարգացմանը:

է) Հաղթահարել զոհ լինելու բարդույթները, ձևավորել պատմական արդարության վերականգնման, կորսված հայրենիքի պահանջատեր լինելու, հայ ժողովրդի՝ իր պատմական հայրենիքում անվտանգ ապրելու և զարգանալու իրավունքի համար պայքարի գիտակցություն, ձևավորել մերժողական վերաբերմունք մարդու կամ որևէ ժողովրդի նկատմամբ կիրառվող բռնությունների հանդեպ՝ կանխելու այսօր էլ շարունակվող բռնությունները:

4. Արժևորել

ա) Որպես իր ազգի հարուստ պատմական փորձով զինված երկրի վաղվա քաղաքացի՝ գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծմանը:

բ) Ըմբռնի և արժևորի տվյալ ժամանակաշրջանի ու ներկայիս Հայաստանի միջև եղած բազմատեսակ կապերը, պատմական փորձի յուրացման, կորուստներից դասեր քաղելու և հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:

Վերջնարդյունքները

Կկարողանան՝

1. Ներկայացնել Հայոց Ցեղասպանության մեջ Օսմանյան կայսրությունից և նրա իրավահաջորդ քեմալական Թուրքիայից բացի, նաև այլ երկրների՝ 1-ին աշխարհամարտում երկու հակառակորդ կոալիցիաների՝ Քառյակ Դաշինքի և Անտանտի երկրների մեղսակցությունը :
2. Բացահայտել , որ Ռուսաստանի Դաշնությունն ունի պարտավորություն բազմաչարչար հայ ժողովրդին՝ ցաղասպանության գեհենով անցած հայ ժողո-

վերադարձնելու Արևմտյան Հայաստանը , առաջին հերթին Մոսկվայի պայմանագրով նրանից խլված Կարսի մարզը, Սուրմալուն և Նախիջևանը:

3. Ներկայացնել և բացատրել թուրք և այլազգի կեղծարարների ու դեմագոգ-ների կողմից թուրքերի և հայերի մեղքերը իրար կողք կողքի դնելը, միմյանց հետ հավասարեցնելը կամ թեկուզ դրանք միմյանց հետ համեմատելը:
4. Բացատրել և գնահատել Կ. Պոլսի տրամաբանական շարունակությունը կազ-մող «Նեմեսիս» օպերացիան, որը այժմ էլ Հայոց Ցեղասպանության նորօրյա կեղծարարների ու թուրք ցեղասպանների փաստաբանների դեմ ահեղ նախա-զգուշացում է:
5. Բացատրել և հիմնավորել հայկական և հրեական ցեղասպանությունների նմանություններն ու տարբերությունները, ներկայացնել Հոլոքստի և Հայոց Մեծ Եղեռնի միջև գոյություն ունեցող կապը:
6. Բացատրել , ներկայացնել պանթուրքիզմ կոչված մարդատյաց, հայատյաց ֆաշիստական գաղափարախոսությունը, որ թուրքական կառավարող վերնա-խավի ձեռքում դարձյալ պանթուրքիզմի դրոշն է, որի մի երեսին գրված է՝ «Կեցցե՛ հավերժական Թուրանը», իսկ մյուս երեսին՝ « Մա՛հ Հայաստանին և հայ ժողովրդին»:
7. Հիմնավորել այն փաստը , որ Հայոց Ցեղասպանությունը վերապրած հայերը բնավ չեն հանդարտվի, մինչև որ Թուրքահայաստանի այդ սրբազան հողը չվերադարձվի նրանց:
8. Ներկայացնի իր կարծիքը «Թուրքական պետությունը և թուրք ժողովուրդը ընդունելո՞ւ են իրենց մեղքը Հայոց Ցեղասպանության համար» և «Հայ ժողովուրդը երբևէ ներելո՞ւ է ցեղասպան Թուրքիային և թուրք ժողովրդին՝ « **1915** »-ի համար» հարցերի վերաբերյալ:
9. Օգտագործի քարտեզներ, ուսումնաօժանդակ գրականություն, ուսումնադիտո-ղական տարբեր պարագաներ, դրսևորի հետազոտելու, տարբեր գործիքակազ-մեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն կա-տարի նախագծային կամ հետազոտական աշխատանք, առաջադրի խնդիրներ և ներկայացնի լուծումներ:
10. Հավաքի անհրաժեշտ տեղեկություններ տարբեր աղբյուրներից, որոշի, բնութագրի աղբյուրի արժանահավատությունը, արտահայտի և հիմնավորի սեփական դիրքորոշումներ ու տեսակետներ, աղբյուրներն օգտագործելիս կատարի հղումներ:

Կապը միջին դպրոցի Հանրակրթության չափորոշչի հետ.

Հ 1, Հ 2, Հ 16, Հ 17, Հ 18, Հ 19, Հ 26, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30,

Հ 31, Հ 32, Հ 33, Հ 34, Հ 35, Հ 36, Հ 45, Հ 46

Կապը ավագ դպրոցի Հանրակրթության չափորոշչի հետ.

Մ11, Մ14, Մ16, Մ17

Ծրագիր / թեմատիկ պլանավորում

(տարեկան)

Հ/Հ	Բովանդակություն	Նպատակ	Ժամաքանակ	Նշումներ
1	Հայոց Մեծ եղեռնի իրականացման գործում մեղավորը միայն Օսմանյան կայսրությունն է:	Զարգացնել ուսումնառության ընթացքում սովորողների ստացած գիտելիքները Հայոց Մեծ եղեռնի՝ որպես պատմական իրադարձության և նրան առնչվող բոլոր ներկա ու ապագա դրսևորումների մասին:	6 ժամ	
2	Օսմանյան կայսրությունից բացի էլ ո՞ր երկրներն են կրում պատասխանատվություն :	Ներկայացնել Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի ուղղակի առնչության մասին Հայկական հարցին և Հայոց Ցեղասպանությանը	6 ժամ	
3	Ռուսաստանի Դաշնությունը, լինելով Խորհրդային Ռուսաստանի և ԽՍՀՄ իրավահաջորդը, կրու՞մ է բարոյական ու իրավական պատասխանատվություն	Նպաստել սովորողների գիտելիքների ձեռք բերմանը 1915-1917թթ. Հայոց Մեծ եղեռնի օրգանական շարունակությունը դարձած Օսմանյան կայսրության կողմից Արևմտյան Հայաստանի և Արևելյան Հայաստանի դեմ 1918թ. փետրվար-սեպտեմբեր ամիսներին իրականացված ինտերվենցիայի վերաբերյալ:	7 ժամ	
4	ԱՄՆ-ը կրու՞մ է արդյոք բարոյական և իրավական պատասխանատվություն Հայոց Մեծ եղեռնի հետևանքների չվերացման համար :	Նպաստել սովորողներին յուրացնելու 1-ին և 2-րդ աշխարհամարտերի գլխավոր դերակատարներից մեկի՝ թիվ մեկ գերտերության՝ ԱՄՆ-ի և՛ ուղղակի, և՛ անուղղակի առնչության մասին Հայկական հարցին և Հայոց Ցեղասպանությանը	6 ժամ	
5	Հայոց Ցեղասպանության մեջ հայ ժողովուրդն ունի՞ արդյոք պատասխանատվության և մեղքի իր բաժինը:	Նպաստել գիտելիքների ձեռքբերմանը, վերլուծելու, մեկնաբանելու Հայ ժողովրդի և մասնավորապես արևմտահայության թույլ տված հիմնական սխալները, որոնց հետևանքով Օսմանյան կայսրությանը հաջողվեց իրականացնել Հայոց Մեծ	7 ժամ	

		եղեռնը:		
6	Ինչո՞ւ 1-ին աշխարհամարտի ավարտից հետո Հայոց Մեծ եղեռնն իրականացրած երիտթուրք պարագլուխները չպատժվեցին հաղթող տերությունների կողմից:	Նպաստել հաղթող տերությունների կողմից 1-ին աշխարհամարտի ավարտից հետո Հայոց Մեծ եղեռնն իրականացրած երիտթուրք պարագլուխներին չպատժելու քաղաքականության մասին գիտելիքների ձեռք բերմանը, կարևոր փաստերը բացատրելու, վերլուծելու, մեկնաբանելու, կարողությունների զարգացմանը	7 ժամ	
7	Որո՞նք են Հայկական և հրեական ցեղասպանությունների միջև եղած նմանություններն ու տարբերությունները:	Նպաստել սովորողների կողմից մարդկության պատմության ընթացքում իրականացված ցեղասպանությունների ընդհանրություններն ու առանձնահատկությունները ուսումնասիրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համեմատելու, համադրելու, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու կարողությունների զարգացմանը:	6 ժամ	
8	Հնարավոր է արդյո՞ք Արևմտյան Հայաստանի վերադարձը իր տիրոջը՝ հայ ժողովրդին:	Նպաստել սովորողների կողմից գիտելիքների ձեռք բերմանը եղեռնազարկ եղած և հայրենազրկված հայ ժողովրդին հասցված վնասների փոխհատուցման, Արևմտյան Հայաստանում պահպանված հայ մշակութային ժառանգության ոչնչացման, , գնահատելու կարողությունների զարգացմանը:	5 ժամ	
9	Թուրքական պետությունը և թուրք ժողովուրդը ընդունելո՞ւ են իրենց մեղքը Հայոց Ցեղասպանության համար, Հայ ժողովուրդը երբևէ ներելո՞ւ է ցեղասպան Թուրքիային և թուրք ժողովրդին « 1915 » -ի համար:	Նպաստել Էսսեների, սեփական կարծիքը արտահայտելու միջոցով գիտելիքների ձեռք բերմանը, վերաբերմունք արտահայտելու, գնահատելու կարողությունների զարգացմանը:	8 ժամ	

10	Կրկնություն, նախագծային աշխատանքների քննարկում Էքսկուրսիա Ծիծեռնակաբերդ	Օգտագործի քարտեզներ, ուսումնաօժանդակ գրականություն, ուսումնադիտողական տարբեր պարագաներ, դրսևորի հետազոտելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն կատարի նախագծային կամ հետազոտական աշխատանք, առաջադրի խնդիրներ և ներկայացնի լուծումներ:	10 ժամ	

Եզրակացություն

Հանրակրթության գլխավոր նպատակը երեխաների, սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումն է, նրանց պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը:
(«Կրթության մասին» ՀՀ օրենք, Երևան, 1999)

Երկար տարիներ հանրակրթական դպրոցի 6-12-րդ դասարաններում պարապելով «Հայոց պատմություն» առարկան, ուսումնասիրելով տարբեր սկզբնաղբյուրներ ու հետազոտական աշխատանքներ՝ եկել եմ այն եզրահանգման, որ Հայոց Մեծ եղեռնը մնացել է «ձայն բարբառոյ անապատի»:

Պարզ ճշմարտություն է, որ Հայոց Մեծ եղեռնի նկատմամբ գոյություն ունեն քաղաքական շահագրգռվածություններով պարուրված և դրանք անտեսելու միտումներ: Ուստի հանրակրթական դպրոցի ավագ դասարաններում անհրաժեշտություն է « Հայոց Մեծ եղեռն » թեմայի խոր և հիմնարար ուսումնասիրությունը լրացվի խմբակի միջոցով, որոշակի ժամաքանակով:

Սովորողները, ուսումնասիրելով « Հայոց Մեծ եղեռն » թեման, համոզվում են, որ Հայկական հարցը պատմական մի այնպիսի հիմնահարց է, որը վերաբերում է համայն մարդկությանը և ոչ թե միայն մեր ժողովրդին:

Դասընթացը սովորողներին դաստիարակում է մարդու և ժողովրդի բնական իրավունքների պաշտպանության, ցեղասպանության երևույթի անվերապահ դատապարտման և անկաշառ հայրենասիրության ոգով:

Գրականություն

1. Ռաֆայել Թադևոսյան՝ « Հայոց Մեծ եղեռն՝ տասը հարց և ինը պատասխան»
2. Արման Կիրակոսյան՝ Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը
3. Դանիելյան Էդուարդ՝ Հայ ժողովրդի մեծ եղեռնը երիտթուրքական վարչակարգի կողմից (1914-1918 թվականներ)
4. Ներսիսյան Մ. «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու», Երևան, 1991:
5. Հայոց պատմություն: 10–րդ դաս, ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքեր:
6. Հայոց պատմություն: 9–րդ դաս, ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքեր:

Հավելված

Տեղահանության իսկական նպատակը թալանն ու ոչնչացումն էր: Իրականում դա բնաջնջման մի նոր եղանակ էր: Երբ թուրքական իշխանությունները հրաման էին տալիս, փաստորեն, նրանք ամբողջ մի ԱԶԳի մահավճիռ էին արձակում:

ՀԵՆՐԻ ՄՈՐԳԵՆԹԱՈՒ - ԱՄՆ դեսպան Թուրքիայում, 1918թ.:

1915թ. սկիզբ առան այս Սարսափները որոնք իրենց հավասարը չունեն պատմության մեջ: Աբդուլ Համիդի ջարդերը դատարկ բան են թվում ժամանակակից թուրքերի իրականացրած կոտորածի համեմատությամբ:

ՖՐԻՏՅՈՖ ՆԱՆՍԵՆ - նորվեգացի գիտնական, 1916թ.:

Արեվմտահայերի բռնագաղթը այլ բան չէր քան քողարկված սպանդ: Չկա աշխարհում որեվէ լեզու այնքան հարուստ և այնքան գունեղ, որով հնարավոր լիներ նկարագրել նման սարսափները:

ԺԱԿ ԴԸ ՄՈՐԳԱՆ - ֆրանսիացի գիտնական, 1917թ.:

Թուրքերը շարունակում էին իրենց նախկին քաղաքականությունը՝ կանգ չառնելով այնպիսի վիթխարի ջարդերի առաջ, որպիսիք կատարել չէր հանդգնում ԼԵՆԿԹԵՄՈՒՐԸ: Ոչինչ չի կարող արդարացնել զանգվածային ջարդերը, ամբողջ նահանգների ամայացումը, գյուղերի ու քաղաքաների տեղահանվող բնակչությանը սովամահության դատապարտելը:2

ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎ - ռուս գրող, 1916թ.

Բոլոր այդ չարագործությունները գործադրվել են հայերի նկատմամբ, թեև նրանց կողմից չի եղել ամենափոքր իսկ մարտահրավեր: Օսմանյան կառավարությունը ի վիճակի չէ թաքցնել իր հանցագործությունը՝ նախազգուշական միջոցների քողի տակ;

ԱՌՆՈԼԴ ԹՈՅՆԵՐ - անգլիացի պատմաբան, 1915թ.:

Ո՞վ կարող է նկարագրել այն զգացումները որոնք ճմլում են ականտեսի սիրտը, երբ նա խորհում է այս դժբաղդ և հերոսական ԱԶԳի մասին, որն աշխարհը զարմացրել է իր խիզախությամբ և անվեհերությամբ, երբ դեռ երեկ Օսմանյան կայսրության ազգերից առավել կենսունակ ու առաջավորն էր, որն այսօր դառնում է սոսկ անցյալի հուշ:

ՖԱՅԵԶ ԷԼ ՀՈՒՍԵՅՆ, 1917թ.:

Այս ժողովրդի ողբերգությունն աննախադեպ իրադարձություն էր մարդկության պատմության մեջ: Ռազմական անհրաժեշտությամբ պատճառաբանված այդ միջոցառումը միայն պատրվակ էր որպեսզի քողարկվեր ԴԱՐԻ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ՝ աշխատասեր ու բարձր մշակույթի տեր մի ամբողջ ժողովրդի լրիվ ոչնչացումը: Հայերը մեռնում էին ամեն տեսակի երկրային մահերով, բոլոր ժամանակների մահերով:

ԱՐՄԻՆ ՎԱԳՆԵՐ - գերմանացի գրող, 1919թ.:

Հայ ժողովրդի ոչնչացումը մնում է և կմնա որպես ամենամեծ ողբերգություն, որը համայն մարդկության, այդ թվում եվ Գերմանիայի ամոթն է, քանի որ վերջինս լինելով Օսմանյան Թուրքիայի առանցնաշնորհյալ դաշնակիցը՝ ոչինչ չի արել մի ամբողջ քրիստոնյա ժողովրդի կոտորածն արգելելու համար:

ԱԼԲԵՐՏ ԷՅՆՇՏԵՅՆ - գերմանացի գիտնական

Հայաստանը վերջին շունչն է փչում, բայց նա կվերածնվի: Այն մի փոքր արյունը, որ դեռ նրան մնում է՝ թանկագին արյուն է, որից ծնվելու է մի հերոսական սերունդ: Մի ժողովուրդ, որը չի ցանկանում մեռնել՝ չի մեռնում:

ԱՆԱՏՈԼ ՖՐԱՆՍ - ֆրանսիացի գրող, 1916թ.:

Խմբակի ղեկավար՝ ---------- Ջեմմա Խաչատրյան

(ստորագրություն)